



Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 7

Տ Ե Ր Ե Ն Ի Ս Ի Ա Ն

12 ՓԵՏՐՈՒԱՐ 1905

Կ. ՊՈԼՈՅ ՀԱՄԱՐ	ԳՍԻՍՈՒՅ ՀԱՄԱՐ	ԱՐՏՈՍԱՀԱՄԱՐ
Տարեկան 50 Ղր.	Տարեկան 54 Ղր.	Տարեկան 12 Ձր.
Վեցամսեայ 25 »	Վեցամսեայ 27 »	Վեցամսեայ 6 »

ԳՍՈՒՆԻԿ - ՍԱՐԳԻՍՕՅ ԵՒ ԸՆԿ

ՄԵԾ ՎԱԾԱՌԱՏՈՒՆ

ԱՄԻՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՑՈՅՆԵՐՈՒ, ՇՂԱՅՆԵՐՈՒ ԵՒ ԴՈՀԱՐԵՂԻՆԱՅ

Կ. Պոլիս, ձեռագիր Պոլիսի թանգարան, Թիւ 16

Մասնաւորապէս կը խնդրուի ուշադրութիւն րնել ՍԱՐԳԻՍՕՅ անունը կեղծող կարգ մը նորեկուկ ժամացոյցներուն որոնք հրապարակի վրայ կը տրջին :

ՍԱՐԳԻՍՕՅ ժամացոյցները ջերմապէս կը յանձնարարուին ինչպէս նաեւ ԶԵՆԻԹՐ՝ րէ՛ Կ. Պոլիս, եւ րէ՛ Դաւառները, ուրկէ եղած յանձնարարութիւնք անմիջապէս կը կատարուին գոհացուցիչ պայմաններով :

Ծանօթ. — ԶԵՆԻԹ ժամացոյցները Բարիզի 1900 Արուեստահանդեսին մէջ ամենեւն քարձը պարգեւին արժանացած են :


Հասք 40 փարս

ԱՐՏՈՒՆԱՏԵՐ — ԱՐՄԻՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

(صاريان) مطبعه سی باب عالی جادوسی ۳۸

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Մ. ՍԱՐԵԱՆ

Կ. Պոլիս Պարպը-Աշի նստակի րիւ 38



Չեռֆի, nsֆի ու nsֆի եւ ձեռֆի
միանգամայն մեքենաներ
կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ,
բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ
մեքենայ մը անթիւ է անհամար ծառայութիւններ կը մատու-
ցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց
եւ տալտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Է Ր

ՀԱՅՔԱՅՔԻՉ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարելագործուածը,
հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՇԱՐԱԹԱՍԱՆ
ՄԱՍՆԱՎԱՐՈՒՄՆԵՐ

- | | |
|----------------|--|
| ԲԵՐԱ | (1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին . |
| | (2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ. |
| ԿԱԼԱԹԱ | (1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը. |
| | (2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | (1. Սուլթան համամ . |
| | (2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 . |
| ՍԱԻԻՏԱՐ | 2արշը Պօյու, թիւ 120 . |

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնաձիւղեր գաւառներու բոլոր ֆաղափներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 եւ 343 կրկին, Տիւզդուլուի տունը:

ՖԷՆԻՔՍ ՕԹԲԻՇԻԷՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆՈՒԱԾ 1860 ԻՆ Ի ՎԻԷՆՆԱ

ԿԵԱՆՔԻ ՃԻՒՂ

Դրամագլուխ եւ Պահեստի գումար

31,008,000 Քրանց

ՀԹԳԵՀԻ ՃԻՒՂ

Դրամագլուխ եւ Պահեստի գումար

17,000,000 Քրանց

- ՖԷՆԻՔՍ** Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ ամէն տեսակ շէնք, ապրանք եւ կարասիք:
- ՖԷՆԻՔՍ** Լաւագոյն պայմաններով կը կնքէ ամէն տեսակ ապահովագրութիւնը մարդկային կանքի վրայ:
- ՖԷՆԻՔՍ** Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ, ամէն տեսակ ապրանք՝ չոգենաւի՝ եւ առաջատանաւի վրայ:

Ընկերութեանս զբաղմունքն է ՔՐԷՏԻ ԼԻՕՆԷ, Ընդհանուր գործակալութեան գրասեն-
եակն է Պոլիս, Հաճօրուլօ խան, թիւ 52, 53, 54, 55, 56:

Ընկերութիւնս կ'ընդունի ի գաւառս պատուաւոր ներկայացուցիչներ:

Լիազօր Գերկայացուցիչ
Գ. ՖԵՐԱՏԵԱՆ



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԶԱԲԱԹԱԹԵՐԹ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ ԹԻՂ 7

ՇԱԲԱԹ

12 Փետրուար 1905

ԲՈՎԱՆԴԱՆՈՒԹԻՒՆ

Պարահանդեսն ու Վարժուհին (Խմբագրական) . — ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ : Ինչո՞ւ Խանդերս կը մարին (Բանաս) . — ՀԱՅԿԱՆՈՅՇ ՄԱՌԻ : Ինձիւնեմա . — ՏՕԲԹ. ՅՈՎ. ՍԷՓ ՏԷՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆ : Երեկոյի Գիշերը . — ԼԻԼԱ : Թապիօ . — ՌՕՄԱՆ : Զայրոյք (Բանաս) . — Օ. ՔԱՄԵԼԻԱ : Զուարթ ժամեր . — Զ. Մ. : Լուրերու Բաժին (Ոսանաւոր) : Անեծք (Ոսանաւոր) . — Ս. ԽԱԶՈՒՆԻ : 10,000 Տարի Սառնակոյսի մը մէջ (Հանրագիտակի քերթօնը) LOUIS BOUSSENARD (Թարգմ) Գ. ՏԷՐ-ՅԱԿՈԲԵԱՆ :

ՊԱՐԱՀԱՆԴԵՍՆ ՈՒ ՎԱՐԺՈՒՀԻՆ

Ինչպէս ամէն պտուղ իր եղանակը , նոյնպէս ալ ամէն նիւթ իրեն ժամանակը ունի , ուր կը ծեծուի , կը խօսուի , կը քաջքշուի տնոր ասոր բերնին մէջ , գրչին տակ : Եւ ահա ձմրան ներկայ եղանակին , ուր երեկոյթներն ու պարահանդէսները անդադրում իրարու կը յաջորդեն , մեր յարգելի պաշտօնակցին Արեւելի մէջ ծայր կուտայ օրուան հարց մը այդ առթիւ թէ՛ Վարժուհիները պե՞տք է պարահանդէս երթան :

Այս պարզ միեւնոյն ատեն իմաստալից հարցումը en un coup d'œil ընթերցողին մտքին մէջ կ'արթնցնէ սա դադափարը թէ , պարահանդէսը անվայել , լիտի ու ամթալից վայր մըն է և թէ այդպիսի տեղ մը վարժուհիին ներկայութիւնը այսպանելի , քանի որ հարցումը նոյն այդ նպատակով կ'ըմբռնուի , ձեռքն չեշտէն դատելով :

Վարժուհին թէեւ իր անունին մէջ կը կրէ կըթուլթիւն , լըջուլթիւն , զգաստութիւն , ժուժկալութիւն և ծանրութիւն , սակայն պէտք է ըսել որ , չդադ-

րիւր այս բոլոր բարոյական սուտերութիւններուն հետ կրել Վարդը և մարդկային բազմաստեակ պէսպիսութիւնները :

Պէտք է գիտնալ որ վարժուհին կղերական մը չէ, ո՛չ ալ կրօնաւորութիւն մը կամ մայրապետ մը, որոնց կեանքը կը տարբերի աշխարհական անհատի մը վարած կենցաղէն : Վարժուհին այն կինը կամ օրիորդն է, որ կոչում ունի կրթելու, ուսուցանելու, մարզելու իր խնամքին, étudէին յանձնուած տղաքը նոյն այդ գործին յատուկ շէնքին մէջ, իսկ անկէ դուրս, վարժուհին՝ վարժուհի ըլլալէ կը դադրի, քանի որ իր կրած անունը արհեստին, գործին կը վերաբերի և ո՛չ թէ անձին :

Վարժուհին, իր գործին կամ զբաղումին յատուկ տարազ մը չունի, ինչպէս ունին ու կը կրեն մայրապետները, կրօնաւորութիւնները, անիկա իր աշխարհիկ դասթիւմին տակ պարզ կինն է կամ օրիորդը, որուն արգելք մը չիկայ զաշխարհ վայելելու՝ իր պէս պէս ու այլազան զբօսանքներով, սլայմանաւ որ պասիօնը, քառոյսկանը և պասշաճութիւնը յարգելի ըլլայ միշտ :

Պարահանդէսը թերեւս շատերուն ակտիւ խորթ հնչէ, ու այդ անուսին բուն նշանակութիւնը, նպատակը սգիկ գաղափար մը տուած ըլլայ, սակայն պէտք է գիտնալ որ այդ անունը բարձր է և գեղեցիկ : Ընդհանրապէս, հաւրուստ ու aristocrate դասակարգն է, որ ոտքին մէկ երկու անգամ զայն կը սարքէ ընտանեկան հարաբերութիւն շրջանակներու մէջ, ու շատ անգամ նպատակը կ'ըլլայ այսինչ կամ այնինչ բարեգործական հաստատութեան նիւթական օգուտ մը, դրամական նպաստ մը : Ու հոն, այդ ընդարձակ սրահին մէջ ուր ճոխութիւն, շիւք և ազնուութիւն միաձուլ պարկեշտութեան հրեշտակին թեւերուն տակ կը գտնուին, մարդ արդարեւ կը սքանչանայ, կը հրճուի ու կը հիանայ, ի տես զատուած ու զտուած զոյգերուն, որոնք կը դառնան հեշտօրօր նուագի մը առնուշ խաղերէն մտրակուած :

Ահա պարահանդէսը, իր բուն անունը արդարացնող պարահանդէսը և ո՛չ թէ հանրային հաճոյքին համար թատրոնի պետերու, ֆազիկնօններու և նմանօրինակ մարդերու զուտ շահու համար սարքած յաջորդական զբօսանքները, որոնց պարահանդէս անունը տալը ինքնին մեծ սխալ մըն է :

Արդ երբ վարժուհի մը տեսնուի վերը յիշուած հայ-չալժ պարահանդէսի մը մէջ, ի՞նչ անպատեհութիւն, ի՞նչ ամօթ և ի՞նչ անբարոյութիւն կրնայ մտածուիլ իր վրայ : Եւ սակայն պէտք է աւելցնել որ, խեղճ վարժուհիները պատեհութիւն չունին վայելելու այդօրինակ շքեղ ու յիշատակելի զբօսանքներ, քանի որ այդ և այդ կարգի միմօտիս սրահներէն ներս մտնելու չափ բարձր դասու երիտասարդներ, մեր վարժուհիներէն շատերու պէս մոռցուած ու խեղճուկ ՏԱՎԱՆՆԵՐ չեն առներ թեւերնին . . . :

Գալով պարին, որ պարահանդէսին տիրող տարրն է, ու միակ իշուան այդ կարգի երեկոյթներու, վարժուհին ինչո՞ւ զրկուի, ինչո՞ւ չմասնակցի և ինչո՞ւ չհետեւի ընդհանուրին :

Պարը ամէն տեղ և ամէն ժամանակ խրախուսուած է աշխարհիս էն զարդացած երկիրներու մէջ իսկ, պայմանաւ որ բարոյականի, պատշաճութեան և լըւջութեան երեք շրջանակներուն մէջ կատարուի ահա: Ուրեմն այս կէտին մէջ ալ վարժուհին իբր աշխարհական անհատ՝ կրնայ իր մասնակցութիւնը ունենալ անխառն ու մարդ չկրնար այսպսեւ աշն օրիւրդը կամ տիկինը, որ վարժուհի ըլլալով վաղ մը կամ առիշ մը կը պարէ իր սեռակիցներուն պէս:

Անձնական փորձառութեամբս կը հաստատեմ և կրնամ ստուգել թէ, տեսած եմ նոյն իսկ երէցիկներ ելեկոյթներու մասնակցող... փետուրի մը պէս վաղ դարձող, այո՛, երէցիկներ, որոնց արտօնութիւն չկայ մեր մէջ ո՛չ թէ միայն պարելու, այլ նոյն իսկ գտնուելու այդ օրինակ խրախուսութեանց մէջ, ո՛ւր կը մնայ վարժուհին, որ կղերական շապիկէն փարսախներով հեռու է, խեղճը: Արդ ամփոփելով մեր տեսութիւնը, վերջացնենք աւելցնելով մի անգամ ընդ միշտ թէ, վարժուհիները իրաւունք ունին վայելելու աշխարհային ամէն զբօսանքները, զուարճութիւնները, ընդ որս և պարահանդէսը, պայմանաւ որ բարոյականի ու զեյյոյցէն չչեղին անոնք: Վարժուհին պէտք է իր դիրքը, անունը և լըջութիւնը պահէ վարժարանին սեմերէն ներս, իր բովին յանձնուած տղոց մօտ, իսկ անկէ դուրս՝ անոնք կը դադրին ամէն արգելքէ ու իբր պարզ անհատ, ազատ են մշտնել այն բոլոր հաճոյքներուն, զբօսանքներուն և զուարճութեանց մէջ, ուր ԱՆԲԱՐՈՅՈՒԹԻՒՆԸ իր միքրպը չէ ձգած:

Վարժարանին մէջ զանոնք պէտք է ճանչնալ վարժուհի, իսկ անկէ դուրս ո՛ւր որ ալ ըլլայ, ալ կը կոչուին պարզ ունի:

ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

Ա Ն Է Ծ Ք Ը

Վ. ՄԱԼԷՋԵԱՆԻՆ

Ըզձոս սերերու, բոց խնկարկումին՝
Փալլէն հոգեբով՝ սահող օրերուն
Պսակ կը հիւսեն. միջէն անկումին
Օրերը կուգ սն քոյլ ու երերուն:

Ու վերջին բառերն, իրենց յանգստէ
Բերեկն դուրս ժայթող մէյ մեկ անեծմեք
Ուղղուած գիրենք պաշտօններուն ու՝
Զղջումի օր պիտի յիշեն դեռ:

Այդ անեծքը բայց իրենց մեղքերուն
Օրհանն է սիրուն: Լիւում դառնօրէն
Տխուր խաբկանքին վիշտէն մոլորուն

Ծախուած սերերուն հոգը կ'ալօսեն:
Կիները՝ սիրոյ կեանքին մէջ սակայն
Խօսք'անքի վախը երբեք պիտի չզգան:

Ս. ԽԱՉԱՏՈՒՆԻ

X ԻՆՉՈՒ ԽԱՆԴԵՐՍ ԿԸ ՄԱՐԻՆ

Վերջապահին, յոյժ ցոլերուն մէջ արեւին,
Մինչ ժամերով ձեռն ի ծեօս խոկամ լըռին,
Ինչո՞ւ քախիծ, սուգ կը տրե իմ սրնարին,
Սրտիս խորէն ինչո՞ւ իղձերս կը սաւառնին,
Ինչո՞ւ խանդերս կը մարին . . . :

Հողմեր, զեփիւռ, թէ գամ գրգռել յոյզերս անշեջ,
Ծաղկանց թէ բոյրն առթէ շանջիս քիւր ելելէջ,
Այդ հրապոյրն իսկ է ինձ համար շա՛ս դրժուարին,
Զի երբ անոնք աչ քառամին ու կորչելին,
Ինչո՞ւ խանդերս կը մարին . . . :

Ես կը սիրեմ քրոյուններու երգը զըւարթ,
Երբ ցունց կուսայ սրտիս. եւ երբ սարսըռայ վարդ,
Ես կ'արտասուեմ: Կուգեմ տեսնել յոյզը ծաղկին:
Իսկ երբ անոնք աչ լըռեն, կեանքս է ցուրտ ու սին...
Ինչո՞ւ խանդերս կը մարին . . . :

Թէ երազեմ սիրտ մ'անողոյք եւ կամ ֆարէ,
Որ սիրոյ դէմ անգրքօրէն պիկն, կապար է,
Որ չի զգածուիր արցունքներէն այն ջերմագին,
Զոր կը հեղուն տանուկ այֆերն զինք պաշտողին,
Ինչո՞ւ խանդերս կը մարին . . . :

Ու դեռ ըսե՛մ . . . հրաժեշտի քառ մը տրտուր,
Երբոր մարէ ի պառ սրտիս վառ բոցն ու հուր,
Զուարթութիւնս փոխուի դրժիւեմ ուրուանկարին,
Սառի հոգիս եւ այդ տեսողով ա ֆս աշխարհին,
Ինչո՞ւ խանդերս կը մարին . . . :

* * *

Զի այդ շողեր, զեփիւռ, ծաղիկն աչ վշտահար,
Զիս չեն քուծեր . . . հիւժեւայ սրտիս չեն իսկ զըքար,
Ու տրտուրեան գիշերին մէջ անհրնարին,
Կը զգամ թէ շո՛ւտ կը մարի յոյսն կեանքիս ջահին,
Քանի խանդերս աչ մարին . . . :

ԹԱՊԼՕ

I

Բնութիւնը չէր օժտած քեզի դէմքի ու դրսեւերւոյթի գեղեցկութիւններով : Օրին մէկը կարգուելու մարմաջէն բռնուած՝ կուգեա համեստ ու գործունեայ մէկու մը ձեռք տալ քանի մը համեստ ոսկիներուդ երեսէն :

Դիպուածը կը ներկայանայ և կը համաձայնիք երկուստեք խօսք կապի պատրաստութիւններ տեսնելու :

Օրը հասած է , բերկրանքդ չափ չունի :

Սալօնին մէջ , երբ պաշտօնական ձեւակերպումներէ հտքը , ալլանսի փոխանակութիւնը պիտի չնորհաւորէին ներկաները , նշանտուքի շաքար կը մեծարուի անոնց : Բաղդհանուկ շաքարը ձեռքը բռնած նշանածդ , նազանքով կը մօտենայ ու ձեռքինը քեզի կ'երկարէ : Կը կարմրիս ու դէմքիդ ծփուած փոշիներուն մէջէն մաղուող քրտինքիդ գետակները , որոնք ազօմներ կը գծէին այտերդ ի վար , մեղմիկ մը չորցնելու զբաղած , իրեն կը մօտենաս :

Զա՛թ . . . կը քաշէք զայն : «Դիմացինիդ արտաքինին մի նայիր ու մի դատեր զայն , ալ անոր ներքինը նայէ :» կը կարդայ բարձր ձայնով , նոր սրտահատորդ : Ու հազիւ թէ մէկ կողմ քաշուեր էիր , անդիէն պզտիկ տղեկը խօսեցեալիդ քրոջը , — «Մա՛մա՛ , մամա՛ , կառնէ մէկէն , իմացա՛ր , նայէ ի՞նչ աղուոր ելաւ մօբարիս քաշած թուղթը» կաւելցնէ , մօրը քղանցքէն քաշելով : . . .

II

Դպրոցականի տարիքիդ մէջ ես : Վարժարանին էն չարածձի տղան ըլլալուդ , իրիկուն մը ըրթընի նշանակուած ըլլալով , ստիպուած էիր մէկ քանի հարիւր տողեր մրտնելու : Բարկութենէդ կրակ կտրած , փոխանակ ազդարարութեան անալու , ծայրայեղ գիրուկ մարդու մը ուրուագիծը կը չինես , ու հազիւ թէ «Պարոն Տնօրէն» մը փակցուցեր էիր պատկերին տակը , յանկուրծ ուսիդ դպչած ձեռք մը կը սթափեցնէ քեզ . . . ու դէմ առ դէմ կուգաք պատկերիդ հերոսին հետ :

III

Ընտանեկան թիւնիօնի մը գտնուած ես , քու ծանօթներէդ մէկուն տունը : Պահ մը երբ սենեակին տաք մթնոլորտէն նեղուած՝ քիչ մը ջուր պիտի ուզէիր , քերթիքիդ ըլլալուդ , անձամբ առնել կ'ուզես ջուրը և սենեակէն դուրս կ'ելնես : Հուտա դրուած ջուրի ամանը հրատապ լեզուիդ յագուրդ տուած էր . . . — Ի՛նչ անուշ էր , կը մտածես : Ու հազիւ թէ տեղդ պիտի վերադառնայիր ,

— Մարիա՛մ , Մարիա՛մ , դուրսի սեղանին վրայի ամանով ջուրը վար տանելու չմոռնաս , գիտե՛ս ես , մինչեւ վար չերթալու համար արծաթ դգալները մէջը լուացի , կ'ըսէ յանկարծ տանը նազելաչուք օրիորդը , որուն հետ պահ մը առանձին մնալու պատենութենէդ օգտուելու միջոցը կը խորհէիր , սենեակին դրան առջեւ մտախոհ . . . :

ՌՕՄՍՆ

ԶԱՅՐՈՅԹ

Զգացումներս ա՛լ կը հասնին առ տակաւ , եւ հեռանցի հրայրներն ա՛լ չեմ զգար , Լոկ ցաւի մը հեւերն գրկած եմ անձկաւ , Ու ցնորա՛ծ , ցնդա՛ծ , հասա՛ծ , խելագար :

Երգեցի քեզ , իմ գրգիռներն ու յոյզեր՝ Արբունքիս մէջ մեղամաղձոս , մոլեգին Զգացումը , որ կիրքերս կը յուզէր , Կը խռովէր , կը դղրդէր իմ հոգին :

Յուզումներս քրքաւոյտ , հոգեկան վրդովներս խռովայոյզ , ծայրայեղ , Երգեցի ես զայրոյթով մը մոլեկան , Գոռ բաւկութեամբ , ովկեանին պէս անհղ :

Հիմա . . . հասան զգացումներս քրքուն , եւ արգ՝ նիհար կուրծքիս տակը մեծաբով , Հիւանդ սիւրս մը կայ անզգայ , երեւո՛ւն . . . Որ՝ պիտի՛ սառի՛ օր մը անհղ զայրոյթով . . . :

Օ. ԿԱՄԵԼԻԱ

Նկատելով որ ձմեռան ներկայ եղանակին շիրտ փոփոխական ու խիստ մթնոլորտեան ազդուող ծանր կամ քեթեւ հիւանդներ գրեթէ չեն պակսիր տուներու մէջ, մեր բնօրինակներուն օգտակար միեւնոյն ասեմ հրահանգիչ յօդուած մը հրամցնելու մտով՝ Տօֆ. Յովսէփ Տեր-Ստեփանեանի *Կես քժշկական Խօսակցութիւններ* անուն հեղինակութեան կը փառանք հետեւեալ հասուածք որ կը խօսի Ինֆլուէնցիայի մասին եւ անոր դարմաններուն վրայ :

Ի Ն Ֆ Լ Ո Ւ Է Ն Ձ Ա

Մեր մասիկները կը կարծեն թէ Ինֆլուէնցիայ ըստ ըստ հիւանդութիւնը նորեկ ըստ մըն է, բժշկներէն ստեղծուած : Գիտունները սակայն կը հաւատարեն թէ՛ այս նոյն հիւանդութիւնը, որուն հայերէն « համադու » կ'ըսուի եւ ռուսերէն փալադիա՝ գոյութիւն ունէր աշխարհիս վրայ, Բրիտանիոյ գէթ վեց հարիւր տարի առաջ : Եւ այդ հին տառններէն մինչեւ մեր օրերը՝ պատմութեան մէջ արձանագրուած չափ մը համաճարակներ ուրիշ բան չէին բայց եթէ Ինֆլուէնցիայ :

Ինֆլուէնցիայի է՛ն նշանաւոր եւ ահաւոր համաճարակը պատահեցաւ սակայն մեր օրերուն, 1889—1890 ին, երբ աշխարհի գրեթէ ամէն կողմերն ալ յաջորդաբար վարակուեցան այդ հիւանդութիւնէն, ու այդ առթիւն էր որ զիտական աշխարհը գլխաւորաբար ձեռնարկեց մանրակրկիտ հետազոտութիւններու, ճշգրիտ համար այդ համաճարակին ընթերցելու : Գիտուած էր արդէն կարեւոր պարագայ մը թէ՛ այդ ծառայող հիւանդութիւնը կ'անցնէր երկրէ երկիր, ճամբորդելով զրաջիւղութեան կարգով : Այսպէս, 1889 ին Ռուսիայէն ճամբայ կ'ելլէր Ինֆլուէնցիան եւ զրաջի երկիրներն այդելլէ վերջ, կը վարակէր ամբողջ երկրագունդը, Սեւաստրապոլէ մինչեւ Հարաւային Ամերիկայի խորքերը, ու Սերպիայէ մինչեւ Բարիոյս, ճամբուն վրայ չի մոռնալով նաեւ Թուրքիան : Այդ թուականին, մեծ թուով նշանաւոր անձեր զո՛հ գացին համաճարակին եւ ամբողջ եւրոպայ՝ վախով համակուած՝ նորանոր միջոցներու գիտեց՝ հիւանդութիւնը զսպելու կամ գէթ անոր ուժը կոտորելու համար :

Պէրլինի մանրէաբանական աշխատանք

ցէն՝ Փֆէյֆէր գտած էր Ինֆլուէնցիային միջոցը կամ մանրէն, թէն իրմէ առաջ՝ ուրիշներ ալ համոզուած էին թէ մանրագիտական անամիկի մը մասը գտնուելու էր այս զարհուրելի համաճարակներուն մէջ : Խնդրին ախտաբանական կողմը բաւական լուսարտնուած էր այլեւս : այդ թշուառական մանրէները՝ տեղէ տեղ կը փոխադրուէին ախտաժէտ մարդերու կամ անոնց պատկանող իրեղէններու միջոցով, եւ գացած տեղերին կը պլչկէին ժողովուրդը : Կրկին ու կրկին փորձերով ստուգուեցաւ թէ՛ առեւտրական կարեւոր կեդրոններ, որոնք իրարու հետ անընդհատ յարաբերութիւն ունէին, իրարու կուտային իրենց հիւանդութիւնը : կամ, ուրիշ խօսքով, փոխադրուած ապրանքներու եւ ճամբորդող վաճառականներու հետ՝ մաքսանկէղութեամբ ներս կը մտնէին նաեւ Ինֆլուէնցիայի մանրէները :

Ինֆլուէնցիայէ բռնուողի մը սովորական պատկերը կրնայ համարուիլ հետեւեալը : Կատարելապէս քաջաւորջ, բանին դործին զացող մարդ մը՝ յանկարծ անհանգստութիւն մը կը զգայ, թէն առաջին անգամ չի՛ կրնար գանգատիլ մարմնական որոշ ցաւէ մը : Երթալով սակայն կը սաստկանայ զբուրակի եւ մանաւանդ ճակատի ցաւը : Մասին ցաւեր կը զգայ նաեւ կռնակը, թեւերուն եւ արունքներուն մէջ : Ատոնց կը յաջորդէ տենդը, որ սովորաբար կը ստիպէ հնթական՝ զիմիկ հորիզոնական դիրքին : Այս բոլոր ախտանշաններն ալ երթալով կը սաստկանան, մինչեւ որ չնչական եւ մարսողական աւելի նեղիչ ու վատագաւոր երեւոյթները զինքը կը դարձնեն կատարեալ հիւանդ մը :

Շնչական դործարանները, քիթէն սկսելով մինչեւ թոքին անհամար փամփուշտները՝ կը բորբոքին եւ այս վիճակէն առաջ կուգայ ընդհանուր հարբուխ մը, որ կրնայ ամենածանր հետեւանքներ ունենալ, եթէ ժամանակին չի խնամուի : Ինֆլուէնցիայէ բռնուող հիւանդները մանաւոր ինամբ տանելու են պաշտպանուելու ցուրտէն եւ միջոցորտային փոփոխական վիճակներէն, քանզի հարբուխին յաջորդ հանդուրանն է թոքատապը : Շնչական դործարաններու վարակումը ա-

պացուցուած կ'ըլլայ երբ հիւանդը կը սկսի հազալ, երբ մանաւանդ հազացած միջոցին կը զգայ լանջքի ու կուշտի ցաւեր :

Հիւանդին ախորժակ չունենալը ինքնին կը ցուցնէ թէ՝ ստամոքսային կամ մարսողական խանգարումն ալ նկատուողութեան առնուելու է, մանաւանդ երբ կերակուրը բոլորովին մերժելու, փսխելու միտում մը կը նշմարուի : Մարսողական խանգարումին առաջին առնելու նպատակով՝ զօրաւոր ըմպելիքներու գործածութիւնը յանձնարարելի է, իբրեւ ընդհանուր կանոն : Ոգելից ըմպելիքները կը գրգռեն արդէն իսկ բարձրած գործարանները և ասանկով կրնան սաստկացնել անհաճոյ տպաւորութիւնները :

Ինֆլուէնձայի բոլոր նշանները ուրիշ կրնան դասաւորուիլ երեք զուխի տակ, — ջղային, չնչական և մարսողական : Ու եթէ ասոնց ստորաբաժանումներն ալ հաշիւի դրնենք՝ ցանկին մէջ առած կ'ըլլանք գրեթէ մարդկային մարմինին յատուկ բոլոր ցաւերը : Ինֆլուէնձան կրնայ առնել գրեթէ բոլոր մեզի ծանօթ ու անծանօթ հիւանդութիւններու երեւոյթը. կատարեալ միմոսական հիւանդութիւն մը, որ շատ հեղ իրաւամբ կը սարսափեցնէ հիւանդին աէրերը և կը չուարեցնէ բժիշկները :

Գալով դարմանին, գէթ սա՛չափը կըրնայ ըսուիլ առանց ո՛ր և է վերապահումի, թէ ինֆլուէնձայէ բնուող մը առաջին օրէն իսկ առնելու է օրսկան կրամ մը սօլիաքս . առնելու է նմանապէս ազդու լուծողական մը, եթէ պէտքը զգալի է : Իբրեւ նախազգուշութիւն, հիւանդութիւնը զգացուելուն պէս՝ ատեն երթալու է. թեթեւ ու ջրոտ կերակուրներ ուտելու է, և քանի մը օր կաթի վրայ իյնալու է միտին : Ծիշդ աւանին ձեռք առնուած պարզ միջոցներով կարելի կ'ըլլայ յաճախ ազատիլ անոր ծոնր հետեւանքներէն, քանի որ ինֆլուէնձային մահացութիւնը հաշուած են 400ին մէկ : Աւելորդապէս, քանի որ ինֆլուէնձային փոխանցիկ հիւանդութիւն մը ըլլալը հասկըցւած է՝ վարակուածներու հետ յարաբերութիւն ունենալէ զգուշանալու է :

ՏՕԲ. ՅՈՎԱԼՓ ՏԼԲ-ՍՏԵՓԱՆԵԱՆ

ԱԶԳԵՐՆԻԴ ԼՈՅՍ

ԳՈՐԾԻ ԳԱԼԻՔ ՆՈՐՈԻԹԻՒՆ ՄԸ

Հագուիլ, շուիլ եւ ադամանդներով զարդարուիլ, ինչպէս նաեւ սան կարասիներ կոկել ամէն կերպով, առանց քակնիդ պարպելու

Ա. Յ. Լ.

Ա. ՊԱՌԻԿ

Մայր ես, աղջկանդ օժիւր կը մտածես՝ դիմէ՛. Օրիորդ ես, շիբ և աժան հագուիլ կուզես՝ դիմէ. Երիտասարդ ես և շիբ կը սիրես՝ դիմէ. Տարեց ես և ցուրտէն պատապարտել կուզես՝ դիմէ. Տղաքներ ունիս որոնց պիտոյքը զանկ կը ճամբեցնեն՝ դիմէ. Ամուսնացու աղջիկ ունիս՝ ըրզակներու պէտք ունիս՝ դիմէ. Եկածը Կաղանդ, է նուէրներ գնել կը փախարիս՝ դիմէ... Տարին քանի մը անգամ հովանոց գնելէն զգուշ ես՝ դիմէ. Չնոք պարսպ ճամբայ քալել չես՝ սիրեր՝ դիմէ. Կուզես սունդ կոկել ճաշակաւոր կարասիներով՝ դիմէ. Առաջնակարգ և տոկոն գուլպաներու պէտք ունիս՝ դիմէ. Կուզես շիբ՝ ճաշակաւոր և լաւ տեսակ փողկապներ ունենալ՝ վերջապէս կուզես՝ օտից ցզուխ հագուիլ, շրուիլ, պննուիլ

դիմէ միմիայն

“ՀԷՐՃԱՅԻ” ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

ՄԵՄ ՇՈՒԿԱՅ, ԳՈՒՅՈՒՄՃԸՆԱՐ ՓՈՂՈՅ ԹԻԱ. 13

ուր պիտի գտնես ամէն տեսակ հագուստի, ճերմակեղէնի, ֆանթէզիի, ադամանդի, ժամացոյցներու, չղթաներու և ամէն տեսակ կարասիներու ճոխ մթերք մը :

ՎՃԱՐՄԱՆՑ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Ապառիկ գնողներու համար հարկւրին 20 կանխիկ և մնացեալ գումարին հարկւրին 5ը չաբաթական վճարմամբ .

2. Կանխիկ գնողներու համար հարկւրին 5 զեղչ .

3. Կանխիկ ծախուած ապրանքներէն միմիայն ադամանդեայ գոհարեղէնները երբ գործածուած լայց անվնաս մնացած ըլլան, հարկւրին 10 զեղչով, իսկ ապառիկ ծախւած և անվնաս մնացած միմիայն ադամանդեայ գոհարեղէններն ալ հարկւրին 15 զեղչով ետ կ'առնուին :

ՍԱԿԱՐԿՈՒԹԵՒՆ ԶԿԱՅ

ԶՈՒԱՐԹ ԺԱՄԵՐ

ՏԵՐՆ ՈՒ ԾԱՌԱՆ

Տէրոյ. — Մարդ Աստուծոյ, առ քանի՞ անգամ եղաւ կը պատուիրեմ, նորէն մազի չափ գիտցածէդ չես չեղիր. երբ հիւրերու ներկայութեան քեզմէ բան մը ուզեմ, ըհրոյ... հարցումը պիտի ընես, ես անանկ կ'ուզեմ կոր, կիմանա՞ս Օրինակի համար երբ որ ըսեմ թէ՛ «բալդոս բե՛ր», «ո՞ր բալդոգ, Տէր իմ» պիտի հարցնես:

Ծառան. — Շատ աղէկ, Տէր իմ, ասկէ ետք ատանկ կ'ընեմ:

Այս պատուէրին վրայ քանի մը օր կ'անցնի: Օր մը Տէրը քանի մը հիւրերու հետ նստած կը խօսակցէր, երբ հարկ եղաւ հօրը ներկայութիւնը:

Տէրոյ. — Կիրակոս, սա քովի սեն. ետեւ գնաւ և հայրիկիս ըսէ որ քիչ մը հոս դայ:

Ծառան. — Ո՞ր հայրիկիդ Տէր իմ:

Տէրոյ. — Կերած ապուրը նայէ, ծո ես քանի՞ հայր ունիմ:

Ծառան. — Խնչ գիտնամ, Տէր իմ, զուք անունկ չպատուիրեցի՞ք:

* *

ԷՐԻԿՆ ՈՒ ԿԻՆԸ

Գիւղացիի մը կնիկը վարժութիւնը բաժնէր ամէն բանի մէջ «եթէ Տէրը կամենայ» ըսելու. այնպէս որ, երբ բերանը բանար, — եթէ Տէրը կամենայ, սանկ պիտի ընեմ, եթէ Տէրը կամենայ, վաղը այսինչ տեղը պիտի երթամ... և այլն կ'ըսէր: Երբ այդ եկաւ թի ժամանակը կը հասնի, էրիկը գիշեր մը կնիկը դառնալով կ'ըսէ,

— Կնիկ, վաղը այգին կ'ընելու պիտի երթամ:

Կինը ըստ սովորութեան, երբ նորէն «եթէ Տէրը կամենայ» յանկերգը կ'ընէ:

— Կնիկ, կըսէ ամուսինը, խաղաղութեամբ հասան, փոխորհիւները անցան, ալ ասոր «եթէ Տէրը կամենայ» կ'այ:

Ու յաջորդ օրը ուղղակի այգին կ'երթայ:

Խաղաղը կ'ընէին և կողմերը քաշելով ձիւրաւն բռնեցին ետքը, երբ դէպ ի գիւղ ճամբայ կ'ընէ, յանկարծ սոսկալի փոթորիկ մը կը փրկի, անանկ անձրեւ մը կ'առնէ որ, միկ երկու վայրկեանի մէջ ահագին հեղեղ մը կը կաշմուի: Խեղճ գիւղացին կենդանիները եղած տեղը ձգելով, հաղիւ քարայրի պէս տեղ մը կը ճարէ ու հոն կ'ապաստանի: Փոթորիկն ու անձրեւը դադարէն ետքը երբ դուրս կ'ընէ իր թաքստոցէն, կը տեսնէ որ ո՛չ ձի կայ ո՛չ ալ խաղաղ, հեղեղը ամէն բան քշեր տարեր է: Խղճահար մարդուկը, աչքերը արցունքով լեցած և մինչեւ ոսկորները լլլիկ եղած տուն կը դառնայ: Երբ դուռը կը զարնէ, կինը վերէն կը հարցնէ.

— Ո՞վ է ան:

Գիւղացին որ հիմա շատ դառն կերպով սովորած էր իր կնոջ սովորական յանկերգը,

— եթէ Տէրը կամենայ, էրիկդ եմ, կ'ըսէ:

Զ. Մ.

 Գասրգիւղի Մխիթարեան վարժարանի աղբասիկ առակներն են ի նպաստ յառաջիկայ Փետրուար 13 եւ 20 Կիրակի օրերը քատեւական ներկայացում տեղի պիտի ունենայ նոյն վարժարանին մէջ: Տարակոյս չկայ քե Գասրգիւղի ծնողները պիտի փութան քաջալերել այս բարեխիղաց ձեռնարկը:

ԵՐԵԿՈՅԹԻ ԳԻՇԵՐԸ



Պէտք է պիտանալ որ միայն պղտիկները չեն որոնք կը ցնծան, կը խայտան, կը ցատկուտեն՝ իրենց գործին գալիք ո՛ր եւ է զըւարճութեան առթիւ, խօսխօճումաններն (!) ալ նոյն ընտելը ունին, նոյն ձեւերը կ'աւնին ի պահանջել հարկին, և կրնամ ըսել տղոցմէ ալ աւելի տաքօրէն:

Բոլոր տնեցիք իրարանցումի մէջ են հիւստ, հոս, հոն, հայելիներու առջեւ արդուզարդի կնճռոտ խնդրը կարգադրելու ըզրազած, ոչ թէ միայն երեկոյթը սարքողները՝ այլ այդ երեկոյթը վայելիլու գալիքներըն ալ իրենց կարգին մեծ իրարանցումի մէջ են:

Դուրսը զիշերասկիզբի թանձր մութը պատած է չորս դին, մինչ երեկոյթին տուներ կը հրդեհի, կը բռնկի կարծես: Բոլոր կապերը վառուած են, ինչպէս նաեւ մոմեր և մինչեւ անգամ իտարէ ֆիթիլիները սանդուխտներուն անկիւնը կը սլալան, այնպէս որ եթէ տունը ապահովագրուած չըլլայ, մեծ հրդեհի մը անխուսափելի վախը պիտի ունենայ տեսողը:

Վայրկիանք մէյ մը փէշ մը կը թռի բաց վարագոյրներու ետին, գլուխ մը կը տատանի քօնսօլին առջեւ, որուն վրայ կազով սրբուած, սկրթուած հայելի մը ապուշ ապուշ կը կրկնէ իրեն զիմող հոպսալայի մը բուռուայածեփ դէմքը:

Ու դեռ ոչ ոք ձեռք կ'առնէ տան զանգակը: Ժամը երկուքն է դեռ:

Մաթիկ աղան տեսնալու է այս պարագային: Իր առտնին թուալէթով հոս հոն կը դիմէ սիկառի մոխրաման ճարելու, ճարճրելու, գտնուածները կը տեղադրցնէ ասդին անդին, ու տեսնելով որ քիչ պիտի գան անոնք քիչ մը վերջ խմուելիք յաջորդական և անհամար գլանիկներուն, շաքթուան մէջ առած հինաթաթան ճէլիգիին վրայի կեղեւներն ալ մաքրելով սալօնին մէջտեղը թավլինին վրայ կը դեռնէ, այսպէսով ազատելու համար գետնի գորգը որ տարի մը

առաջ գնած էր հազար եւ մէկ դժուարութիւններով:

Գալով տիկինին և աղջիկներուն, անոնք դեռ թուալէթի ետեւէ չէքրկէներու պէս մէկ հայելին միւսը կը ցատկէին ու դեռ ոչ մէկը բուռուան բռնել տուած էր երեսին:

Երբ ժամանակը լրացաւ, ու հրաւիրեալներուն անխուսափելի գալուտը կռահեցին տնեցիք, բոլորը մէկ սալօնը ժողովուեցան ձեռքերնին չփելով, մինչ Մաթիկ տղան դէմքը կախ, անկիւն մը կծկուած, յօնքերը վեր բարկութենէն մարմնոյն չորս դին սփռիկներ դուրս կուտար, որոնք յաջորդաբար կը մարէին:

— Ինծի նայեցէք, իքուամները ո՛վ պիտի հանէ... Ըսաւ մարդուկը իր գործը մտածողի մը կանխամտածութեամբ:

— Շնորհիկը, ֆիլօսֆիկը, ի՞նչ գիտնամ, ես հանելու չեմ ետ...:

— Նայեցէք կ'ըսեմ կոր, թէփաին բերելնուդ պէս, որի քի պիտի երկնցունէք նէ սանկ ծառքի չափուխութիւնով մը թացուցէք քօլէն քի, հասնողը չէքէրին թապախին մէջը մատները չխօթէ տէ գանձն չալէ, աս կակող է, աս սէրթ է, ըսելով. ետքէն բացը կը մնաք տէ խալիլէի չէքէրին միւխթամ կ'ըլլաք...:

— Տէր ողորմեա՛յ... Մաթիկ աղա մէյ մէկ հատ չառնին զահէր...:

— Ճանրմ դուք թէթիկ կտնուեցէք տէ...:

— Սլթըլս ատտարն ալ չեմ կրնար ընել, անէքի տալէթ ենք ըրել նէ պարտքերնիս է քի կշտացունենք...:

— Բա աղէկ ետ... Ի՞նչ տեղը կար քի աս տալտաղան գլոխս փաթթեցիք, հարսնիք կա՛յ, ի՞նչ կայ...:

— Սո՛ւս, ալլահալէմ տուռն էր... վազէ՛ պաց քա Շնորհիկ...:

Եւ իրօք հրաւիրեալները ծայր տուած էին ու դուռը բացուելուն, անուուկ մը բռն թուգալի պէս՝ մեծ, պղտիկ, օռթա ներս խուժեցին:

—Բարի իրիկուն Մաթէոս աղա, շատ տարիներու, կալու բան չէինք ամա, կելլա կիւճէնմիշ կ'ըլլա տէյի՝ տունով տեղով ժողովեցի եկայ . . . :

—էյ բարի եկաք ամա, չիտակը կուզէք նէ . . . :

—Հապա՛, խըյախ սիրտին կը դնէր Մաթիկ աղան էյէր քի չիգայիք նէ, խօսք առաւ տիկինը, իր ամուսնոյն տմարդի մէկ խօսքը կտրելով, դուք գիտէք քի անիկա վիրա ասանկ էյլէնճէներ կո սիրէ . . . :

—Ամա գուզում քուրուկ, Լեւոնիկս նոր իֆլուէնցայէն ելաւ, տաքուկ տեղ մը ըլլար տէ քունը գար նէ պառկցունէի . . .

—Պէ՛ ճանրմ իշտէ ատ չեղաւ, չօճուխը իւղնիւկ ընէ նէ՛ . . . խօսք առաւ Մաթիկ աղա, տեսնելով որ պակաս չմնալու համար հիւանդ մըն ալ բերած էին հետերնին :

Ու կէս ժամ հազիւ անցած թէ չէ, սենեակները, ներսը, դուրսը հիւրերով լեցւեցան, ափսոսէս որ Մաթիկ աղա պարապ անկիւն մը չկրնալով գտնել նստելու համար՝ ռաքի վրայ մնաց :

—Շիտակը ըսելով բէք մարդավարի է մեր Մաթիկ աղան, սա նայէ, ռաքի վրայ կեցեր է տէ խումանտա կ'ընէ կոր քի խուսուր չըլլայ տէյի . շնորհակալ ենք Մաթիկ աղա, նստէ՛ ճանրմ, ըռահաթ ըրէ, կ'ըսէին ներկաները, մինչ խեղճ մարդը տօպածի պէս կը դառնար առ ի չգոյէ աթոռի :

Նոյն ատեն մօճտեմ երիտասարդ մը Մաթիկ աղայի մօտենալով,

—Ձեր սրտաբուղիս և պատշաճապէս սարքած երեկոյթին ներկայ գտնուիլս հանդէպ ձեզ պէս ազնուասրտի մը պարտակաւոր թիւնս կատարած ըլլալու պատիւը կը սուրբանեմ ներսս . . . :

—Ներսը ի՞նչ կայ, ի՞նչ է եղեր քի ետևում, չեմ հասկնար կոր . . . :

—Այսինքն՝ ներսս ըսելով՝ սիրտս ըսել կ'ուզեմ . . .

—Հա՛. էյ ա՛յ օղու լօխման ուռուֆի խուլլանմիշ եղիր, անէքի սիրտդ, ներսդ զօռ ունիս նէ ի՞նչ ըսեմ . . . :

—Ո՛հ, երջանիկ ընտանիք . . . ըսելով կը մեկնի, մինչ Մաթիկ աղա իր կնոջը մօտենալով,

—Ինծի՛ նայէ կնիկ, սա աստեղը սոււււաւէ՛ է, չէ նէ մի հասթահանէ . մէկը իֆլուէնցա է եղեր, մէկալը սիրտըս, ներսըս կըսէ կ'երթայ կոր, նա՛սըլ պիտի ընենք . . . չեմ հասկնար կոր . . .

—Բա ճանրմ ի՞նչ կ'ըսես կոր, ո՛վ է ատ.

—Նա՛, սա տիպը պաք միւսիւն, ուշախի չաքէթ հագեր է նէ . . . ես ալ լօխման ուռուֆի թէրթիպ ըրի, չըլլայ նէ, նօհուտ ետխըրի մը թող պանայ . . . նէ՛ իշ տիր պու . . .

—Բա ճանրմ, քիմ պիլիր ի՞նչ գրաքարւճա դօմըլմանթներ ըրաւ տէ տուն ծուռ հասկցար, հայտէ ներս գնայ միսաֆիրներուն քովը նստէ, ես տուրսի իքուսմները նայիմ, ըսելով կը մեկնի : Ու երբ Մաթիկ աղա ներսի սենեակը կ'ուղղուէր, յանկարծ ապշած կը կենայ, տեսնելով որ իր նազէնիմ օրորդները անդին խուռուած կը տեսակցին իրեն անծանօթ երիտասարդներու հետ :

—Ինծի նայէ միլօռիկ, կը ձայնէ իրենին, ի՞նչ է ան, ո՛վ են ատ անճանաչ հէրիֆները, ի՞նչ բան ունիք անոնց քովը . . . :

—Աման հայրիկ, բէք թօհաֆ ես, միւսիւ Բարսեղը իլէն միւսիւ Օգսէնն են . . .

—Ես ալ Մաթիկն եմ . . . ճանչցար հիմա, տէ՛, աստին եկէք նայիմ, հիմա գլուխըս տաքնայ նէ բիւթիւնը մէկ տուրս կաւելում հա՛ . . . իս չըզղըյէն մի հանէք . . .

— Աման հայրիկս ամօթ է . . . Տէր ողորմեա՛ . . . հրաւիրեալները . . .

— Աղէկ եա ես չեմ ճանչնար կոր նէ, ասոնք ո՛վ տալէթ ըրաւ տէ հրաւիրեալ եղան, առաջ սա հասկնանք . . .

— Տէր ողորմեա, միւսիւ Օգսէնը չի ճանչնայիր, չօճուխ տարիքին գիտե՛ս մեր քովի վէրանէն ուչուրմա կը թուցունէր, ան անդիլ միւսիւ Բարսեղն ալ Ագապի հանրմին թոռն է, սա ուր է թուրքէզն ինկաւ տէ թիւը սախտեցնէ . . .

— Էյ հա ամա նէ ուչուրմա թուցունելնին գիտեմ կոր նէ ալ թուրքէզ է, սուֆուա է, ինչ խառնախօսի է ատկէ վար իյնալը . . . խոըխճին ես չի բերի՞ եա . . . սա քսան տարի առաջ մեր քովի վերանէն ուչուրմա թուցուցեր են տէյի կ'իլլան տէ տալէթսիդ տնիկ անկլ հո՛ս սօղուխ կ'առնեն . . .

— Սուս, աս թառափը կուգան կոր, ես երթամ կլասեն հանեմ, ըսելով կը մեկնի հօրը մօտէն և անմիջապէս տիկինը կը հասնի . . . :

— Ի՞նչ է ան ճանրմ, ի՞նչ եր երէրէք կը պտտկիս կոր միտափրնեքուն քովը, չի գա՞ս . . . ամօթ կ'ըլլայ կոր . . . :

— Պէ կնիկ, նասը՛ միտափիր, աս եկողներուն սուսաթը երածս պիլէ չեմ տեսեր, ո՞վ են, ի՞նչ են, նայինք անունս գիտե՞ն . . . ո՞վ տալէթ է ըրեր, սըտեղը միւսիւ մը կայ, ասկէ քսան տարի առաջ մեր քովի վէրանէն ուշուրմա թուցուցեր է տէրի ելեր եկեր է ինքնիրեն . . . աս հասնողը, «Մաթիկին տունը երկու կազ էլէլ կը վառի կոր, մութլախ էլէնէ մը կայ» ըսելով գուրը չալեր ներս են լիցուեր . . . :

— Տահա նէլէր, բիւթիւն միւր գիտացուներն են անսնք, տուն հոգդ մի՛ ընեք, ետպանճի մարդ չիկայ, ես քեզի չըսի՞ քի աղջիկ զաւկի տէր եղողը մէկ աչքը քէօ մէկ անկաճն ալ խօլ պիտի ընէ տէր . . . հէլպէթտէքի ասանկ կէնճ ու կանանչ տըղաքներ պիտի գան քի աս սըրաւարտի էքսիկ էթէկները տեղաւորուին . . . չի նային բիւթիւն պէլլի պաչը ծանօթ տղաքներ . . .

— Էյ իրա՛ւ, հախ ունիս, քսան տարի առաջ ուշուրմա կը թուցունէ եղեր, քսան տարի ետքն ալ աղջիկ պիտի թուցունէ . . . օլուր ըսէ տէ գործդ նայէ . . . :

— Հայտէ, պոչ լախըրտընեքը ձգէ տէ ներս եկուր ամէնուն աչկը քեզի է ուր մը նայ տէր . . . :

— Կեցիր նայինք սա իքոսամին սօնը գայ տէ կուգամ, ինծի անանկ կ'երեւայ կոր քի թէփսիին հետ ես ալ պիտի պտտիմ, զէրէ ալուճ ալուճ ճէպերնին կը խօթեն կոր լէպլէպիլի պէս . . . :

— Տահա նէլէր, ըսելով կը մեկնի մօտէն, մինչ Մաթիկ աղան իրօք, հրամցուած ֆուռի կլասէին ափսէին հետ աչք կը պըտըտցնէ, երբ տասերկու տարու աղեկի մը երկու ձեռքով իքոսամը ճալտկողտելը կը տեսնէ :

— Ինծի նայէ տղաս աս շէքէրին պայաթը չուտուիր, մէկ հատ մը տախ հէրիք է օղլում . . .

— Երկու հատ աղբարիկիս պիտի տանիմ իրեք հատ ալ նինէիս . երկու հատ ալ քուրիկս կը քնանայ կոր անոր պիտի պահեմ, հինգ հատն ալ ինծի . . . :

— Օղլում առած տեղս ըսեմ տէ վաղը հայրիկդ չարչի իշնայ նէ թող սինսիլէյիդ ալ մէկէն առնէ, հիմա նայէ աստար սիւրիւրին չէնեէն պիտի խաղայ ատու . . . տուն վար ձգէ տէ . . . :

— Նինէս ըսաւ քի ի՞նչ իքոսամ հանեն նէ պահէ տէ հետդ բեր ըսաւ նէ՞ . . .

— Նինէյիդ բարեւ ըրէ մէզառ շէքէրի չի հանեցին քի պահէլ ըսէ, ան կը հասկնայ օղլում . . . հայտէ :

Ալ խրախճանութիւնը իր ծայր աստիճանին հասած էր : Բոլոր հրաւիրեալները քօնեակի հաւանէն տաք գլուխներով պարի սկսած էին տրամիկի ու քիթառայի անուշ թէմբօն ու ոչ ոք մտքէն կ'անցընէր Մաթիկ աղան, որուն տունը կը գտնուէին և որուն մէկ շնորհիւն էր այդ գուարճութիւնը :

Պարի էն տաք միջոցին Մաթիկ աղա երիտասարդի մը մօտենալով :

— Ինծի նայէ՛ միւսիւ, գետնի խալին տահա անցած տարի օխտը հաւանին տիպը ինկաւ տիտր օր կէսմիշ ըրինք նէ, կտորճիկ մը հափիֆ կոխես նէ չըլլա՞ր . . . :

— Ներեցէք տէ՛ր իմ, տանս ըսուածը իրեն յատուկ թէմբօն ունի, որուն պէտք է հետեւի պարողը, և որուն մէջ առաջին տեղը կը բռնէ սա տանսանթ մագուսթան :

— Քեզի մազ ո՛ւր կայ չեմ ըսեր կոր, խալին համար կ'ըսեմ կոր քի հափիֆ կոխէ տէր, թիւլէնմիշ կ'ըլլայ կոր, ետքէն Մաթիկ մը տահա չիկայ քի տեղը դնէ . . . :

— Խնդրեմ . . . ո՛հ . . . միթէ կարելի՞ է . . . խնայեցէ՛ք . . .

— Զէլգէկութիւն պէտքը չէ միւսիւ, ես քու գիտցածներէդ չեմ, անանկ օյում օյում մի գար դէմս, նայէ ըսեմ, թապիլէթը քի մը իլիմօնի է զէրէ . . . :

— Բայց գիտնալու էք որ մենք ձեր հրաւիրեալը ըլլալով, պատուած ենք ձեր երեկոյթը և լիք . . .

— Հասկցանք ամա, ձեզի տակը կարմիր պալմոմիով տալէթ չըրինք ես . . . հէմ ձեզի չեմ ճանչնար կոր, ո՞վ կըսուիք :

—Ո՛հ երկինք, արեւ, լուսին և պըլպուր... Էնսիւլթ. Աստուած իմ ջախջախուած կը զգամ անձա, ու սիրտս մըրը կայոյզ ուկէանի մը պէս կ'եղեւէջէ... :

—Բա կնիկ հոս եկուր, սուվառէ՞ է ի՞նչ խառնախօսի է, ինչ է նէ, աս թէատրոյի օյինճիւնները ի՞նչ տէյի կլոխս ժողվեցիր... :

—Պէ՛ ճանըմ քեզի հե՛տ օղրաշմիշ պիտի ըլլամ պիր տիւզ, նա՛սըլ օյինճի հէրիֆները, պատիւ են ըրեր ելեր եկեր են... :

—Նա՛սըլ պատիւ, առապա մը լախըռտըլէն պօխճա մը բան չհասկցայ, սիւլիւկի պէս կը քաշուի կը քաշուի ինքզինքը թող կուտայ կոր... :

—Հայտէ տուն ներս գնա՛, վրաս մարեւիք կուգայ կոր, ալթըխ բիւթիւն բիւթիւնէ թուցուցեր ես, անանկ կերեւայ կոր, ըսելով, ներսի սենեակը կառաջնորդէ իր տիպար տմուսինը ու ինք ներքին կարգ ու սարքին հսկելով կը զբաղի :

—Էյ չնորհակալ ենք Մաթէոս աղա, էօմրիս մէջը ասանկ ճիւմպիւշ մը վայելած չունէինք :

—Խաչոր, ըսի եա, Աստուած Մաթոս աղայիս պէս չէն ու չէյիք դրացիները պակաս չընէ, իշտէ-օլուխով չօճուխով վախիթ կ'անցունենք կոր... :

—Ըսի եա, մեր ճահիլները ճիւմպիւշ ուղեցին նէ, հիւմաճուկուան վախտը խօլայ չէ, քանի մը օրէն Մաթոսիկ աղան էյլէնճէ պիտի տայ հոն կերթանք ըսի... :

—Սանքի կա՛յ եա՛... Մաթիկ աղան ալ չըլլայ նէ, սուռաթնիս արեւ ցաթիլիք չունի սանքի, սըւոր սըտեղը դուռ դրացի ժողվուեր էյլէնմիշ կ'ըլլանք կոր... :

—Աստուած Մաթիկ աղայիս երկար օրեր տայ, չէ քի տարին հեղ մը՝ հապա մէկ քանի անգամ ընելու է ասանկ էյլէնճէներ քի մեր ճահիլները զապտ ըլլան, չէ նէ կըլոխին կ'առնեն պիր պաշ Պէյ Օղլու կը վազեն կոր... : Ու երբ բոլոր հրաւիրեալները կարգաւ իրենց խօսքերը աւարտեցին, Մաթիկ աղա յօնքերը պուտեղով,

—Աղէկ չնորհակալ եմ քի եկաք հրամանեցիք, ամա ինծի կուգայ քի աս սօն ճիւմպիւշ է... :

—Տէր ողորմեայ Մաթոսիկ աղա, մեր աչքը քու վրաէ է քի ասանկ օրերու գանք

տէ օրերնիս օր ընենք... սա խօսքդ ետ առ. նոյն ատեն, տիկինը մօտենալով իր ամուսնոյն :

—Մաթիկ աղա, քօնեակը հատաւ, հայտէ կնայ տէ պախալը բանալ տուր, խախկ ու ըռէզիլ պիտի ըլլանք, կ'ըսէ ականջէն :

—Հէ՛, քա խելքերնո՛ւդ եկաւ, աս Խաչիշ տաղիի ճո՛ւր էր... ի՞նչ խալթ կուտեն կոր... :

—Սո՛ւս... ամօթ է... :

—Խաչի պէս սը՛սմմս ընելուդ, աչքդ բանայիր տէ քիթերնին մէջը խոթել չի տայիր թող. հէ՛մ ինծի նայէ, նայէ ի՞նչ կըսեն կոր, աղէկ օր Մաթիկ կայ, խաչի պէս խարճէ տէ մենք օրերնիս օր ընենք կ'ըսեն կոր... կայ եա կրակ կը կտրիմ կոր... :

—Հա՛ ամա, Ծիլօռիկը պէճերուեցաւ... :

—Համմէ՛... :

—Սա մոռ դուավաթլըն հիշ բէշը չձգէր կոր, սո՛ւս, գործերնիս գործ է :

—Չհասկցայ ըսածդ, ո՛րն է ատ միւսիւն նէ ցուցուր նայիմ... :

—Դուն մի՛ խառնուիր, կէնէ մի՛ պաշլայէր դող կելլամ կոր :

Մինչ կինը պիտի շարունակէր խօսքը, Մաթիկ աղա յանկարծ դուրս նետուելով, հոս հոն կը սկսի փնտռել իր աղջիկը, ու երբ վերի յարկը կելլայ, հոն սնտուկներու յատուկ խցիկի մը դրան առջեւ կը գտնէ երկու երկսեռ ֆիթիլը առածները :

—Ինծի նայէ միւսիւն, հրամանքդ դուրս կելլամ տունէս... :

—Ո՛հ... Էնսիւլթ, պատիւ, ամօթ... :

—Թէատուօյի բռօվա չենք ըներ կոր. բալթօդ ա՛ռ տէ պօյըդ տեսնամ... :

—Տէ հայտէ... սուլու զէվզէկ, ըսելով՝ օճիքէն կը բռնէ և դուրս կը նետէ միւսիւն :

Ու երբ կինը խելացնոր վրայ կը հասնի, տեղեկանալու համար եղածին,

—Ի՞նչ է ճանըմ, ի՞նչ կընես կոր Մաթիկ աղա... :

—Բօնեակը պակսեցաւ, ըսիր, ես ալ պախալին կը զրկեմ կոր քի առնէ տէյի, ամա ինծի կուգայ քի երթայ նէ ինք պախալին, պիտի փռէ... հոն խալին... :

ԼԻԼԱ

ԼՈՒՐԵՐՈՒ ԲԱԺԻՆ



Դեմովն իր պատաս կարծես խոկալու,
Իբրեւ Առաջնորդ, չբւաճի Բալու,
Մթնովն իր առո՛ղջ, մարմնով անարիւն,
Մեր արժանքնիր Հայր Սուրբ Կորիւն,
Որ քեմականաց ի վիճես եւ ի ցա՛ւ,
Յողուածագրութեամբ մի՛ւս պարապեցաւ,
Ու գործին հանդեպ իր բազմապահանջ,
Յո՛յց տուաւ, ափսո՛ս, ընկրկում, նահանջ,
Նամակ մ'ուղղելով Ս. Պատրիարք Հօր,
Հրաժարական տուաւ գլխիկոր,
Քանզի Վիճակին, ո՛հ, քեմական իր,
Ձիմբը պահել հոն ա՛յ չեն փափաքիր,
Ու միջեւ անոնց եւ իր փորձ մեքին,
Տարբերութիւններ կան խիստ ահագին:

Պատեցնալարող անկուս, անսոնիկ,
Առաջնորդն ընտիր, քաղիքն Պիլեհիկ,
Կեօմիւսնեան Մովսէս Սրբազանը ծեր,
Որ իղձովն իր հոս գալ արտօնուած էր
Ս. Պատրիարքն մեր հայրագործով,
Մինչեւ Պիլեհիկ քաղաքն հեռագործով,
Շաբբուս մեջ Պօլիս գալով, — շարունակ
Երկաթուղիին կարգով պարզունա՛յ —
Փեսայացընէ՛ պիտի տեսնողին,
— Թանկագին հրեշտակն իր անբիծ սրտին —:

Լուր կուտան ցաւօք Սալմաթմուրեհն,
Թէ տեղւոյն Տեսուչն ընտիր ապաւեն,
Որ մթնին համար լեցուն, սրտես,
Կ'արժէ որ յաճախ զինքը դուռտես,
Երկու օր առաջ, երբ դարոցին մեջ,
Վարժուհեաց առջեւ քրքուռն, փափկամեջ,
Սիկառը վառած, ուրախ, կ'ընէր *հոփ*,
Դրլխուն է կեբեր մեկ խոտը *հրկեփ*,
Եւ իբր հեծեւանք այս նուրբ արկածին,
Ձէ՛ կրցեր, աւաղ, նայիլ իր գործին:

Մուտակի վրայ գործ ընող սասիկ,
Տիգրանի՛ աղա՛ս, նո՛խ, բարեբասիկ,
Որ Դուսաբուրի խողին մեջ, անտո՛ւք,
Իր չորրորդ կնոջն հետ, լո՛ւռ, անթրուկ,
Ուտել, խմել վերջն անհունորէն,
Դժբաղդութեան մեջ ին՛չա՛ծ էր նորէն,

Վրաստան տունէն, ո՛հ, անկերպարան,
Լուծել կը բաղձայ զինք կապող պարան,
Դասասանական հորհուրդին առաջ
Պարզած աղերսովն իր լալահառաջ: (*)
Հոս ոմանց, գործին մեջ իր ձեռնհաս,
Ուսուցիչ մը, որ Անճմեան Թովմաս
Անուն մ'ունի շի՛ք, անձին նրման իր,
— Աստուա՛ծ լոկ գիտէ, պարա՛րտ քէ նանիր —
Դեպ երուսաղէմ չընէր առանձին,
Իբրեւ ուսուցիչ տեղւոյն դպրոցին:

Դրամը պատեող իր սրտին խորէն,
Դուսաբուրի Տէր քանանան հորէն,
Որ Դասըգիւղի պերճաւորք բաղին,
— Իմա՛, շողողուն ոսկւոյ շի՛ք դեղին —
Աչք ունէր եւ, ո՛հ, այս նպասակաւ,
Ասեցէ մ'իմեր, կ'աշխատէր տակաւ,
Արժանի եղաւ իր այս բաղձանքին,
Ու դասակցեցաւ իր եղբարց անգին:
Քեթեբեան ծանօթ էջէնսին Բարսեղ,
Որ խելնուկ զրոյց հանդեպ սիրալեղ
Միտ մը կը կրէ մարմնոյն մեջ, ու մեր,
Բարիքներ գործէ քաղիքն իր *ճեղք*,
Դուսաբուրի սա Դուրսին համեստիկ,
— Իր անկեղծ սիրոյն իբրեւ հաւաստիք —
Դպրոցին սանուց զրաւ իբր ընծայ,
Որպէս զի անոնց սիրտն, հոգին ցրնայ,
Աշխատաւորական քարտէսներ օրհնող,
Թէ՛ մեծածաւալ եւ քէ գունագեղ:

(*) Ու հիմա որ այս գրուեցաւ արդէն,
Ստոյգ աղբիւրէ մեզ կը հաղորդեն,
Թէ Տիգրան աղա՛ն չունի բնա՛ւ յանցանք,
Ու կիցն է եղած իրեն մեծ փորձ սնք,
Որ իր ամուսնոյն կարաստօքն ընտիր,
Չըւա՛ծ է Բերա, . . . օրհն ի խընդիր,
Ու Պատրիարքաւորն ալ դժբաղդ երկուն,
— Ի՛նչ տարօրինակ կնիկ մարդեր կան —
Յանձնելով մի մե՛ծ, լայնասառ Կոնդակ,
Կրտէ քէ կիցն է պատճառ բովանդակ,
Եւ Տիգրան աղան, այր առաքինի,
Որ չըմպեր նոյ՛ իսկ, օղի կամ գինի,
Ձէ՛ բնաւ ունեցած, կեանքին մեջ երբե՛ք,
Հոմանի մ'իբե՛ն պատուոյն՝ վարկաբեկ:

«ՀԱՆՐԱԳԻՏԱԿ»Ի ԹԵՐԹՕՆԸ 2

Հեղինակ՝ ԼՈՒԻ ԴՊՈՒՍԵՆԱՌ

Թարգմանեց՝ Յ. ՏԵՐ-ՅԱԿՈԲԵԱՆ

10,000 ՏԱՐԻ

ՍԱՌՆԱԿՈՅՏԻ ՄԸ ՄԷՁ

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԻ

Սառույցի անապատին մարդը կէս մը ելաւ, ցնորքի մօտ ապշանքով մը տեսաւ թէ իր շուրջի էակներուն մէջ կային որ գետնին չէին դպչեր։ Անտեսանելի թելէ մը կախուածի պէս, դետնէն վեր մէկ մէթրէ մինչեւ 100 մէթր բարձրութեան մը մէջ, այդ մարդիկը կը սահէին ստուերներու պէս, բընական և դաշն շարժումներով։ Թեւերով և ձեռքերով շարժումներ կ'ընէին, գլուխներն կը ծռէին կամ կը դարձնէին, կ'առաջանային, ետ կ'երթային, կ'ընդհատուէին և կ'իջնէին այնքան դիւրութեամբ որ կարծես գետնին վրայ էին և ոչ թէ անկից վեր։

—Անտարակոյս կ'երազեմ, պօռաց յանկարծ ծերունին. ուրեմն... ո՛վ էք դուք...

Խիստ ձայնի մը այս բառերուն առջեւ արտակարգ արարածները դադրեցան իրենց մեղամաղձոտ խօսքերը արտասանելէ։ Եւ որովհետեւ իրենց փափուկ ականջները, ուրոնք այնքան քաղցր ձայներու վարժուած էին, չէին կրնար ասանկ կոչոտ արտայայտման մը զիմանալ, այդ էակները վայրկեանաբար սկսան հեռանալ իրենց անշուշտիւրի ստուերի լուռ սահումով։ Ուրեմն աւելի սրտոտ կամ նուազ դիւրազգած, կեցան երկայնքը այն պատին՝ որ կը սահմանադէր այն շէնքը, ուր կ'անցնէր այս տեսարանը. ուրիշներ անշուշտ կ'անհետանային, կը թռչէին աւելի՛ այդ պատին վրայ ընդհատաբար խոշոր ծակերէն։

Ծերունին այս յեղակարծ տեսարանին առջեւ ազդուած, գերազոյն երկիւղի մը մէջ աւելցուց.

—Բեւեռական արշաւախումբի մը յետին մնացորդն եմ... Անունս աղէկ ճանչցուած

է զիտութեան մէջ, և դուքէ ձեր մէջէն մէկը լսած է իմ վրաս խօսուիլը... Այն խորհի բոլոր թերթերը պատմեցին արդէն մեր դժբաղդ արշաւախումբին պատրաստութիւնները և յիշատակեցին մեկնումը... Սէնթէզ է անունս և Շուէտացի եմ... Ըսէք ինծի թէ ո՛ւր եմ, ո՛վ էք դուք, ո՛վ դուք որ զիս աղատեցիք...

Ո՛չ իսկ պատասխան մը։

Ներկաները անշարժ կը կենային երկինքին և երկրին միջև իրենց անընդհատ զիրքով, կամ լուռ ու մունջ կը թափառէին սրբանին մէջ, չընկելով ներսն ու դուրսը պատահաններուն, որոնցմէ կը նշմարուէին շէնքին լայնի հատուածները։

Մ. Սէնթէզ այս խօսքերը անդիւրեղն արտասանեց, յուսալով որ այդ լեզուն աւելին շատ տարածուած ըլլալով, բազմապիսի ունենար հասկցնելու։ Բայց իր ձեռքերուն անօգուտ ըլլալը տեսնելով, սկսաւ դերմաներէնի, բայց այդ գոռ ու աղմկոտ լեզուն միակ արդիւնքը եղաւ ներկաներուն զգայնութիւնը գրգռել։ Անոնք սակայն բարի կամեցողութեամբ լեցուն կը թուէին ըլլալ, և իրենց այդ տամադրութիւնները կը յայտնէին։

Մ. Սէնթէզ իր փորձերը ֆրանսէրէնով կրկնեց։

Անօգուտ։

Յետոյ իտալերէն, ռուսերէն, սլոներէն, հոլանտերէն, նոր յունարէն, արաբերէն, նիգերերէն, եբրայեցիերէն...

Բայց դարձեալ ոչինչ։

Այն ատեն ծերունին մոմիջեց յուսահատ.

—Այս մարդիկը ուրեմն կը պատկանին

ուրիշ ցեղի մը, ուրիշ մոլորակի մը վրայ կը գտնուիմ ես կամ կապուելի՛ք խենթ եմ պարզապէս... Այս վերջին ենթադրութիւնը, աւա՛ղ, ամէնէն հաւանականը կ'երեւի ինծի, եթէ երբէք վայրկեանէ մը ի վեր չեմ զառանցեր, սառնակոյտին ծոցէն արթննալէս առաջ... Տեսնենք, ի դուր փորձեցի ամէն կարելի ազդարարաւ գործածել ինքզինքս հասկցնելու համար, միայն հատ մը մնաց. սակայն եթէ չինարէն խօսիմ հետեւին... :

Եւ Մ. Սէնթէզը, որ եղական բազմալեզուէն մըն էր, շարքը շարունակեց փայլուն կերպով և կացութիւնը պարզեց ամենամաքուր քվանտիկայերէնով մը, որ Երկնային կայսրութեան կեդրոնական նահանգներուն մէջ, մանաւանդ Բէքինի, Նանքինի և այլ մեծ քաղաքներու մէջ խօսուած Մանտաբրինեան ազնուական թարգման է :

Կարելի եղածին չափ կը քաղցրացնէր իր ձայնին շեշտը, վախճալով խորհեցնելէ այս գերզգայիկ մարդիկը, որոնք կամաց կամաց կը մօտենային այժմ հետաքրքիր :

Հրա՛շք, իր այս փորձը անյուսալի արդիւնք մը տուաւ. կը հասկնային հիմա իր լեզուն, թէիւր ո՛չ ամբողջովին, բայց վերջապէս նոյն բարբառով պատասխանեցին իրեն և յաջողեցաւ քանի մը մտածումներ փոխանակել :

— Է, ի՞նչ, ըսաւ Մ. Սէնթէզը, փոքրահասակ ակնոցաւոր ծերունիի մը, որ առանց նկատի առնելու իր մեծ տարիքը, անոր շուրջը կը ցատկոտէր. հին անցած ժամանակներէ ի վեր այնչափ այս լեզուն կրնայ ատանկ ազաւազումներ կրած ըլլալ :

— Անճանաչելի ըլլալու աստիճան, մերմուռ փոքրիկ ծերունին : Բայց հանդարտեցէք Մաօ-Չին, մեր մէջ բազմաթիւ լեզուագէտներ պիտի դառնէք, որոնց ընտանի է մեր հայրերուն գաւառաբարբառները :

— Մաօ-Չին ըսիք... ինծի՛ համար է որ կը գործածուի այդ սրահումը : (*)

(*) Մաօ-Չին գրականօրէն կը նշանակէ «Մազոտ մարմին» : Այս անունն է որ արդի Չինացիք կուտան Արեւելեան Ասիոյ կղզիներուն կիսավայրերի Այնօ ցեղին :

— Անտարակոյս. և այդ բառը ուր է վիրաւորիչ հանգամանք ունենալու չէ՞ ձեզ համար, նկատի առնելով ձեր մազերուն արտակարգ առատութիւնը : Իրաւ ալ մեր Այնօներուն մէջ կարելի չէ զոննել մէկը որ կարենայ ձեզի հետ մրցիլ այդ մասին...

— Տեսնենք, յարեց Մ. Սէնթէզը որ տակաւին թմրած վիճակի մը մէջ էր, ի՞նչ եզական արհամարական բառի վրայ կը վիճինք այժմ : Արդէն պատիւը ունեցայ ձեզի ըսելու թէ Շուէտական ծագում ունիմ, հետեւաբար Այնօներուն հետ ուր է կապ չունիմ : Այս երկարամազ մուշտակը որ կը ծածկէ զիս, իմ մորթս չէ, ի՞նչ տարօրինակ բան...

— Շուէտական ծագում, հարցուց մարդուկը մեղմօրէն, չեմ հասկնար...

— Ձէ՛ք հասկնա՛ր...

— Ոչ...

— Ձէ՛ք գիտե՛ր Շուէտը...

— Դժբաղդաբա՛ր, օտարական...

— Եւ Անգլիա՞ն... Ֆրանսա՞ն... Գերմանիա՞ն... Ռուսիա՞ն...

— Այս բառերը տարտամ յիշատակ մը հազիւ կ'արթնցնեն ներսու : Ասոնք երկարատեւէ ի վեր ինծի անձանօթ մնացած երկիրներու անուններ են, անանկ չէ՞...

— Եւրոպա՞ն... կակազեց Մ. Սէնթէզը հեղձամղձուկ ձայնով մը :

— Եւրոպա՛, պատասխանեց ակնոցաւոր մորդուկը արշահար, ասանկ բան չեմ գիտեր :

Մ. Սէնթէզը անգամ մը եւս ցնորանքի ենթակայ կը կարծէ ինքզինքը և կը հայցնէ դարձեալ :

— Ո՛ւր եմ ես...

— Բայց... հիւսիսային լայնութեան 10-րդ աստիճանին վրայ :

— Եւ երկայնութեան ո՞ր աստիճանին վրայ...

— Շուրջ 11 ու կէս արեւմտեան երկայնութեան վրայ :

— Ո՞ր միջօրէականին վրայ, եթէ կը հաճիք...

— Թումպուքթուլի միջօրէականին վրայ, պատասխանեց մարդուկը որ զարմացած էր այս տեսակ հարցումէ մը :

— Թումպուքթուլի, գոչեց Մ. Սէնթէզը որ գիտէր թէ ատանկ միջօրէական մը չկար.

Թումպուքթուն ալ միջօրէական ունի :

—Անշուշտ . Թումպուքթուն , Արեւմտեան Չինաստանի մայրաքաղաքը :

Կատարելապէս սառած մարդու մը յարութեան հրաշքը , որքան ալ աներեւակայելի թուէր , բայց անկէջ աւելի անճշմարտանման էին այն անցքերը զորս կը լսէր Մ. Սէնթէլ վարկեանէ մը ի վեր :

Մարմնական և մտաւորական այս կրկին հակադրեցութեան ուժին տակ ծերունին յանկարծ վերստացաւ իր բոլոր կորովը և կոչումը ըրաւ իր միտքին բոլոր կարողութիւններուն :

Բացորոշ բան մը կար , սա էր թէ ըստուգապէս գոյութիւն ունէր ինք : Առանց փնտռելու թէ ինչ եղանակով վերակոչուած էր կեանքի մէջ , և այս աշխարհէ Էական խնդիրին լուծումը ապագային թողով , Մ. Սէնթէլ ինքզինքը սահեցուց գետնին վրայ , տառապանքով ելաւ կեցաւ իր կերպով մը գոսացած ծունկերուն վրայ , անշարժ կեցաւ և իր աչքերուն բոլոր ուժովը նայեցաւ զինք շրջապատող էակներուն և այն չէնքին ուր տեղի կ'ունենար այս աննկարագրելի տեսարանը :

Առաջին ակնարկով այս մարդիկը չէին նմաներ մարդաբանական որոշ տիպարներու ոչ մէկին : Սեւամորթներ էին , Չինացիներ էին : Ո՛չ մին , ոչ միւսը կամ եթէ կարելի է մէկը կամ միւսը :

Իրենց վերնամորթը առանց սեւ ցեղին չափ գունաւոր ըլլալու , Մոնկոլեան ցեղին դեղին երանգն ալ չունէր :

Այս երանգը , խիստ թեթեւցած , մէկին կամ միւսին կը յարմարէր միանգամայն , և բայց անուշ հաւանական սիկաւի գոյնի մը կը վերածուէր : Անոնց մաշկը խիստ սև , խիստ թաւ և զուռ էին , բայց սևամորթներու մաշկերուն չափ խոփէ չէին և աւելի կը յիշեցնէին խառնածիններու մաշկերը : Դիմագիծները կը կրէին երկու ցեղին ալ մասնաւոր յատկանիշերը : Իրենց աչքերը յայտնորէն կը նեղնային , այսերը ցայտուն էին , քիթը կարճ ու տափակ , չրթունքը մաստ ու թանձր , աչքի խոռոչ ակունքերով : Մէկ խօսքով , չին-սիբիրեան շքեղ խառնազգիներ :

Բայց ինչ որ ամէնէն առաջ ուշադրութեան կը զարնէր դիտողին , մեծղի , տարապալման տարածութիւնն ու ձևն էր այս բոլոր մարդոց զլուխներուն , առանց բացառութեան : Եթէ անոնց հասակը միջին հաշ-

ւով 1 մէթր 75 սանդղի մը նշանակելի բարձրութեան կը հասնէր , իրենց զլուխն ծաւալը , յայտնորէն կրկինն էր խեղճ Մ. Սէնթէլի զլուխին : Մեր ճաշակին համար այս տգեղ մասնայատկութիւնը աւելի ևս կը շեշտուէր անոնց անդամներուն զուռ կոշտական շնորհակալութեան , ընթացքներու հրաշայի նրբութեան և փափկութեան առջև :

Մ. Սէնթէլ որ ծայրայեղ հետաքրքրութեամբ մը զանոնք կը դիտէր հաւաք չէր ուղեր որ այդ փոքր ձեւերը , փոքր ոտքերը որոնք կը ցայտէին ճերմակ լայն թիկնոցներէ , կը պատկանէին այդ հրէշային զլուխներով նոյն մարմիններուն : Բայց իրողութիւնը ահա իր գէշն էր վայրագ պերճաւորութեամբ մը :

Ծերունին ինքնիրենը մրմնջեց .

—Ա՛յ կասկած չկայ , աս մարդիկը գետնէն վեր , օդին մէջ կը շարժին : Չեմ երազեր . . . ճիշդ է : Ամէնքն ալ առանց բացառութեան ունին այն շատ տարօրինակ յատկութիւնը , այսինքն հասակնէն վեր բարձրանալու կարողութիւնը , ինչ որ մեր ժամանակներուն կը կոչուէր ինքնամբարձում : Իմ վաղեմի բարեկամս Բունդի Քրիշնա ունէր այս կարողութիւնը , բայց ո՛չ այս աստիճան : Անոնց քով ինքնամբարձումը կարելի էր խիստ հեռաւոր միջոցներով և ընդհանրապէս խիստ կարճ ժամանակի մը համար : Մինչ այս մարդոց համար այդ ձիրքը սովորական վիճակ մըն է , ապրիլու հրաշալի ձեւ մը , յատուկ իրենց ցեղին որ զոռնոք կրնայ ապրեցնել տեսակ մը օդային կեանքի մէջ , վայկանաւարար տեղէ մը ուրիշ տեղ փոխադրել և սա յատկանիշն ու ազդեցութեամբ խառնակութիւնէն փախչիլ , պատուհանէն . . . : Արդեօք առնչութիւն մը կայ իրենց այս խորհրդաւոր գոթութեան ու իրենց ուղեղային գործարանին հրէշային զարգացման միջև . . . : Կ'ուզեմ որ գիտնամ այս բանը :

Ծերունին յետոյ բարձր ձայնով և չինարէն լեզուով աւելցուց , խօսքը ո՛չ մէկուն ուղղելով , այլ ամէնուն ալ գրեթէ :

—1886 տարին էր որ քնացալ բեւեռային սառույցներուն մէջ : Ինծի բացատրելէ առաջ թէ այսօր ինչպէս կը դառնում ձեր մէջը , ըսէք ինծի թէ ո՞ր տարին մէջ է որ կ'արթննամ . . . :

—11,886 տարւոյն մէջ ես , պատասխանեց անմիջապէս երաժշտական ձայնը ակնոցաւոր մարդուկին , որ անշարժ կեցած էր գետնէն երկու մէթր բարձր :

(Շարունակելի)

Արտօգրութիւն ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

Տպագրութիւն Մ. ՍԱՐԳԻՍԻ

Պոստիկի հասցէի Թ. 38

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԶԱՆՈՅՐԶ ԵՂԵՆԱՅ

Արանց, Կանանց եւ Տղայոց

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ ԵՒ ԸՆԿ

Կ. Պոլիս, Սուրբան Համալ, Թօփալեան Խան

Սոյն վաճառատունը, որ տարիներէ ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց տու-
կունութեամբ և գիներու անմրցելի ա-
ժանութեամբը շահած է բոլոր իրեն գի-
մող յաճախորդաց վստահութիւնը, այս
անգամ ձմեռուան յատուկ ընտիր հա-
գուստներու, կանանց քէյրոյիներու և
տղայոց չիք և գիմացկուն ֆօքսիւմներու
ճոխ մթերք մը պատրաստ ունի, որ
չերմապէս կը յանձնարարուի ամէն ա-
նոնց, որոնք պէտք ունին ներկայ եղա-
նակին հագուստի և ուրիշ նմանօրինակ
պիտոյից .


Սակարկութիւն չկայ, թիւը 2 դրչ է.
Գաւառներէն յանձնարարութիւնք
փութով կը կատարուին .

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ, Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԹԷՅԻ ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐ

ՄԻՇՏ ԱԺԱՆ ՈՒ ԹԱՐՄ ԵՆ



ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ԸՆՏԻՐ, ԱԺԱՆ

ԵՒ

ՀՈՏԱԻԷՏ ԹԷՅԵՐ

Կ. Պոլիս, Պանդեֆափու, Ճեյալ-Պեյ խան, քիւ 10



Ա Ն Տ Ե Լ Ի Պ
Վ Ա Ժ Ա Ռ Ա Տ Ո Ւ Ն
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ՆՈՒԱԳՍՐԱՆԱՅ ԵՒ ՊԻՏՈՅԻՑ

Մ Ա Ս Ն Ա Ի Ո Ր Ա Ք Ա Ր

Ֆոնոկրաֆի Է. Գրաններու. Կրամֆոնի
Է. Էրկկոլմ Բլագներու. Կեդրոնա-
տեղի Պանդե Գաբու, Հաճի Պեքիբ
Էֆենտի կից, Եալորգ խանի տակ
քիւ 2: Մասնաճիւղ Պանդե Գաբու.
քիւ 52:

Վաճառատանս
30 տարիներէ
ի վեր ծախած
ապրանաց տո-
կունութեան և
թէ նորոգու-
թեան մասին
չահած համբա-
ւը բազմաթիւ

յաճախորդներուն ծանօթ ըլլալով, կը փութանք յայտարարել թէ՛ այս անգամ նոր
դրութեամբ և կատարելագործեալ լաւ տեսակ Կրամֆոններ և երկու կողմն ալ զատ
զատ եղանակներով Բլագներ բերել տուած ենք, և կրնանք մրցիլ հրապարակի վրայ
գտնուած բոլոր նմանօրինակ ապրանաց հետ, թէ՛ տոկունութեամբ, ձայնի առաւելու-
թեամբ և թէ՛ աժանութեամբ: Գաւառներէն եղած յանձնարարութիւնք կը կա-
տարուին ամենայն ուշադրութեամբ և հոգածութեամբ:

Անգամ մը փորձելը բաւական է հաստատելու համար մեր ըսածները Դիմել՝
կեդրոնատեղին: